ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. մայիսի 22-ից 25-ը Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝

Արմեն Կոտոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել)

22.05.2019-25.05.2019թ.

4. Հրավիրող կողմը՝

Եվրոպական միությունում Հայաստանի Հանրապետության առևտրական կցորդ

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցել Բելգիայի Թագավորությունում (Բրյուսել) 2019թ-ի մայիսի 23-24-ը կայանալիք Եվրամիության(ԵՄ) Արևելյան գործընկերության նախաձեռնության 2-րդ պլատֆորմի շրջանակներում գործող «Reform of Systems of Technical Regulations and of Related Infrastructure» առևտրի հարցերով պանելի 18-րդ նիստին:

Նիստին մասնակցության հետ կապված՝ ինքնաթիռի տոմսերի և հյուրանոցի ծախսերը հոգացել է հրավիրող կողմը:

6. Քննարկված թեմաները՝

Շուկայի վերահսկողության ոլորտում ԵՄ օրենսդրությունը և Արևելյան գործընկերության անդամ երկրների կողմից իրականացված իրավական բարեփոխումներին առնչվող հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գործուղման շրջանակներում քննարկվել են մի շարք հարցեր.

- Շուկայի վերահսկողությունը կարգավորող օրենսդրական բարեփոխումներ,
- ԵՄ անդամ երկրների շուկայի վերահսկողության օրենսդրության ներդաշնակեցում,

- 765 դիրեկտիվայի քննարկում,
- Սլովակիայի, Լեհաստանի և Բելգիայի փորձի ուսումնասիրություն:

Ելույթ են ունեցել նիստի մասնակից երկրների ներկայացուցիչները, այդ թվում նաև ես:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման ժամանակ որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել: Պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ շուկայի վերահսկողության ոլորտում Արևելյան գործընկերության անդամ երկրների միջև համագործակցության մակարդակի բարձրացման և փորձի փոխանակման նպատակով, կազմակերպել փոխադարձ այցելություններ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկվել է.

- Շուկայի վերահսկողության, իրացվող ոչ պարենային արտադրանքի անվտանգության նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով նմանատիպ հանդիպումները դարձնել պարբերական:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

27.05.2019թ.